ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.10.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 104/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Բարվա» ՍՊԸ-ի 27.09.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Արարատի մարզպետարանի 03.10.2016թ. թիվ 2/3/1-2/5529-16 գրությունը, «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի փաթեթը, ԳԲԽ-104/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.10.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանը «Հակակարկտային կայանների ձեռքբերում տեղակայումով» նպատակով 05.08.2016թ. հայտարարել է «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգ, հայտերի բացման օր է սահմանվել 16.08.2016թ., որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է առանց էլեկտրոնային ստորագրության:

«ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. որոշմամբ հաղթող է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Բարվա» ՍՊԸ-ն վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերը, 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետը:

Ընկերությունը նշել է, որ բացելով հայտերը, Պատվիրատուն հայտարարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ գնահատել է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքին, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն չի ներկայացրել անհրաժեշտ և հրավերով պահանջված փաստաթղթերը: Ընդհամենը առանց ուսումնասիրության ընդունելով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը՝ «Լոկատոր» ՓԲԸ-ին ճանաչել է հաղթող: Այնինչ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել թիվ 168-Ն 35-րդ կետի 9-րդ ենթակով սահմանված պահանջների համապատասխան:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն թույլ է տվել օրենքի խախտում և ընթացակարգն անցկացրել օրենքի պահանջներին անհամապատասխան՝ «Բարվա» ՍՊԸ-ին զրկելով հաղթող ճանաչվելու իրավունքից, պատճառելով վնաս: Հետևաբար հիմնք ընդունելով այն հանգամանքը, որ վերոնշյալ փոփոխությունը կատարվել է 07.07.2016 թվականին, իսկ գնման ընթացակարգը հայտարարվել է հրավեր 05.08.2016թ., այսինքն իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո, ուստի չի պահպանվել օրենքի իմպերատիվ պահանջը՝ հայտը չի ներկայացվել համապատասխան հաստատումով, իսկ տվյալ դեպքում նշվածը թույլ է տալիս եզրահանգելու ընթացակարգի ապօրինի լինելու մասին:

«Բարվա» ՍՊԸ-ն խնդրել է «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգը ճանաչել ապօրինի և Պատվիրատուին պարտավորեցնել լուծել պայմանագիրը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.09.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-104/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն մասնակցելով «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնման ընթացակարգին հայտը ներկայացրել է առանց էլեկտրոնային թվային ստորագրության:

«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը խնդրել է, որ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգը ճանաչել ապօրինի և Պատվիրատուին պարտավորեցնել լուծել պայմանագիրը:

2. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Արարատի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի պատասխան Կենտրոնի 29.09.2016թ. թիվ 01/04.2/3590-16 գրության, 03.10.2016թ. թիվ 2/3/1-2/5529-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ որ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը բողոքարկվել էր «Բարվա» ՍՊԸ-ի կողմից և այդ ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը 29.08.2016թ. թիվ 2/3/1-2/4734-16 գրությամբ ներկայացվել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին: ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 13.09.2016թ. կայացվել է որոշում, որի համաձայն մերժվել է «Բարվա» ՍՊԸ-ի բողոքը: «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ 15.09.2016թ. կնքվել է պայմանագիր, որը սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերցվել է հաշվառման:

Պատվիրատուն «Բարվա» ՍՊԸ-ի 29.09.2016թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիր կնքում է, եթե նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհուրդ չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ Արարատի մարզպետարանը միաժամանակ տեղեկացրել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից մասնակիորեն կատարվել են հակակարկտային կայանների տեղակայման հետ կապված աշխատանքներ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.09.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-104/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը, հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կոմից ներկայացված հայտում փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. ԳԲԽ-104/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 14.10.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Բարվա» ՍՊԸ-ի 27.09.2016թ. բողոքը բավարարել՝ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

4. ԳԲԽ-104/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-104/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզպետարանը «Հակակարկտային կայանների ձեռքբերում տեղակայումով» նպատակով 05.08.2016թ. հայտարարել է «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձաժողովի 19.08.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային եղանակով ներկայացված հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել բավարար և նույն արձանագրության 3-րդ կետով մասնակցին ճանաչել ընտրված մասնակից:

5. www.gnumner.am պաշտոնական կայքում 19.09.2016թ. տեղեդրված հայտարարության համաձայն՝ ՀՀ Արարատի մարզպետարանի և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև 15.09.2016թ. կնքվել է ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02 ծածկագրով պայմանագիր:

6. Կենտրոնը 10.10.2016թ. թիվ 01/04.2/3704-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանն և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին և խնդրել է հնարավորիսն սեղմ ժամկետում տրամադրել «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից կազմված էլեկտրոնային հայտի փաթեթը:

7. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.09.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-104/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանելով հանձնաժողովի հարցին հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կոմից ներկայացված հայտում փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս ***<u>փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:</u>***

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***<u>էլեկտրոնային թվային ստորագրությամբ:</u>***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ ***օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է***, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն ***առոչինչ է*** կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն ***առոչինչ է:***

Կարգի 36-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով սահմանվում է, որ՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ ***բողոքների քննության արդյունքում*** արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ ***վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը***, ապա այդ հիմքերն ի

հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի ***միակողմանիորեն լուծելու պայմանագիրը***, եթե արձանագրված խախտումները ***մինչև պայմանագրի կնքումը*** հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ***հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.09.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-104/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը, պատասխանելով հանձնաժողովի հարցին, հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կոմից ներկայացված հայտում փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որից հետո Կենտրոնին տրամադրվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի էլեկտրոնային հայտի փաթեթը:

ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացրած՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից կազմված էլեկտրոնային հայտի փաթեթի ուսումնասիրությունից երևում է, որ վերջինիս կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի «PDF» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերը ստորագրված և կնքված են, սակայն ֆայլերի վրա բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը արձանագրում է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտի գնահատման փուլում թույլ է տրվել Օրենքի 31-րդ հոդվածի, Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի, հրավերի 7.9 կետի պահանջների խախտումներ և վերոհիշյալ խախտումների պայմաններում Պատվիրատուն «Լոկատոր» ՓԲԸ-ին ճանաչել է հաղթող և վերջինիս հետ կնքել գնման պայմանագիր, մինչդեռ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի «PDF» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերի վրա էլեկտրոնային թվային ստորագրության բացակայությունը հիմք է հանդիսանում ընկերության հետ պայմանագիրը չկնքելու համար:

Ավելին, Օրենքի 31-րդ հոդվածի, Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի, հրավերի 7.9 կետի պահանջների խախտման պայմաններում ՀՀ Արարատի մարզպետարանի և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև 15.09.2016թ. կնքված ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02 ծածկագրով պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով, ըստ էության, անվավեր է (տվյալ դեպքում բացակայում է կնքված պայմանագիրը առոչինչ հայտարարելու հիմքերը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բարվա» ՍՊԸ-ի 27.09.2016թ. բողոքը բավարարել՝ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Հայկ Կարապետյան**

Անդամ՝ **Համլետ Գասպարյան**